

Քղսա և զգիսախոհիւրն կուրիսու և զկամիլլոս
Օդտաւէարս գործեաց 'ի գուպարաց ճակատամարտ՝
Դըմպըհի աղքատութիւն և հայրենի անդ վիճակիւր,

Զոյդ և պատշաճ բնակարան :

Ա. Ե. 'ի սիիւռ մեծաձիգ՝ զերդ ծառ զանիսուլ 'ի պահու՝
Հըռչակ անուան Մարկելսոյ. և աստղ Յուլեան լուսապայծ առ
Փայլէ 'ի բնաւըս շողջողուն, որդունակ ինք և լրւսին

Յառուեղախումքն 'ի կաճառ :

Հայր և պահապան և խնամակալ մարդկան գրոհի,

Ո. Վ. Զըրուանայ գու ծընունդ, քեզ 'ի բախտէն հաւատացեալ
Հոդ խնամայ կեսարու մեծի, հզօր դու իշխեսցես,

Լիցի կեսար քեզ էրկրորդ:

Նա թէ զՊարթես ըսպառնալից ՚ի մարտ ընդդէմ լատիոնի
Ըզնըւաճեալսն արդարացի յաղթանակաւ վանեսցէ,
Եւ կամ բնաւ թէ տիրեացէ ազգացն Հընդկաց և Սերաց

ՅՈՒրկելից անդր 'ի մարզ,

Ի վայր քան զբեզ՝ արդարութեամբ վարեացէ զլայն տիեզերս.
Խսկ դու զլիկնիր որոստագչ ահեղ կառօք սարսեսցես,
Եւ զահագին կայծակունագ արձակեացես 'ի բարձանց
Ի պեղծ մայրիսն անտառաց :

Թարգմանեաց

Հ. Յովհաննէս Թօրոսնես

ՈՂԱՐՄՈՒԹԵԱՆ ՀԲԵՇԱԿԱԼ

Ա. Ե. Ի՞նչ Հրեշտակ ճերմակ թեւով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ
Լի շնորհքով, փայլոն դէմքով. —
Նա' ամենուն վերայ զըթայ,
Զամէնք գըգուէ երկնախրնամ. —
Դա' Հրեշտակն է ողորմութեան:

Լեռներ, ձորեր կըտրէ, կ' անցնի
Հաննելով մօտ անձար խեղճի,
Ալատս ձեռքով կու տայ ոսկի,
Շըրթունքներէն մեղրզ կաթի:
Սատուածակիր ու մեծ հոգում
Մեր ամենուն վերայ հըսիէ,
Մըրտմաշ հոգեր գուշակելով
Խուռ հաւաշանք մեր նա լըսէ:

Ա. Ե. Ի՞նչ Հրեշտակ ճերմակ թեւով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ,
Լի շնորհքով փայլոն դէմքով. —
Նա' ամենուն վերայ զըթայ,
Զամէնք գըգուէ երկնախրնամ. —
Դա' Հրեշտակն է ողորմութեան:
Լաղագին մօր, ցըրտհար տըրուն,
Եւ անկողին ընկած ծերուն
Նա կը գոտնէ տունն, կը տանի
Հզգեստ, հաւեկ և փառեկ.

Ճամբուն վերայ ընկածներուն՝
Ջեռ զինութեան կ' երկընցընէ,
Փօխան պաղ ցարտ խըրառներու
Ցայս զըթութեան կը ներընէ:

Ա. Ե. Ի՞նչ Հրեշտակ ճերմակ թեւով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ
Լի շնորհքով, փայլոն դէմքով. —
Նա' ամենուն վերայ զըթայ,
Զամէնք գըգուէ երկնախրնամ. —
Դա' Հրեշտակն է ողորմութեան:

Հոգած հոգով՝ նա ամենուն
Ցետ նիւթական առատ հացի,
Կու տայ խըրառ վարանելցն
Որ յուսահատ ըլդարսուի:
Կորովալից նորա խօսքեր
Կը փարատեն զամէն վլշտեր,
Մընիթարուած գոհ կը լինին
Հոգին մարդոյ, միաք, սիրտ, մարմին,

Ա. Ե. Ի՞նչ Հրեշտակ ճերմակ թեւով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ
Լի շնորհք, փայլոն դէմքով. —
Նա ամենուն վերայ զըթայ,
Զամէնք գըգուէ երկնախրնամ. —
Դա' Հրեշտակն է ողորմութեան: